ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 փետրվարի 2017 թվականի N25_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 92-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 954 -Ն որոշման 1-ին կետը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել նոր խմբագրությամբ Սյունիքի մարզի՝

1) «Կապանի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի.
2) «Կապանի N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N2 հավելվածի.
3) «Անդրանիկ Մարգարյանի անվան Կապանի N7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N3 հավելվածի.
4) «Կապանի N13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N4 հավելվածի.
5) «Գորիսի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N5 հավելվածի.
6) «Գորիսի Յու. Բախշյանի անվան N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N6 հավելվածի.
7) «Գորիսի N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N7 հավելվածի.
8) «Գորիսի Ս. Խանզադյանի անվան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N8 հավելվածի:

2. Հանձնարարել պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ ապահովել կանոնադրության փոփոխության (նոր խմբագրությամբ) պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական «միջնակարգ դպրոց» ուսումնական հաստատությունների վերանվանման կապակցությամբ «հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N92-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ. փետրվարի 16
ք. Կապան